

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՅԱՆԵ ՅՈՒՐԻՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ապահովագրական ընկերության ֆինանսական կայունության գնահատումը եվ
կանխատեսումը
(ՀՀ նյութերով)

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Աշոտ Աղասու Թավադյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության դոկտոր

Գրիգոր Պարզևի Այվազյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. դեկտեմբերի 28-ին, ժամը՝ 14⁰⁰-ին
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի
տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք.Երևան, Մ.Նալբանդյան փող. 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. նոյեմբերի 28-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ս. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱՎԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ապահովագրական ընկերության ֆինանսական կայունության գնահատման համար անհրաժեշտ է հետազոտել ֆինանսական կայունության քանակական չափման այնպիսի միջոցներ և տվյալներ, որոնց վրա կհիմնվի ֆինանսական կայունության վերլուծությունը և կանխատեսումը, ու պարզել այն չափորոշիչները, որոնք բնորոշ են նրան:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տնտեսագիտական գրականության մեջ ձևավորված չէ միասնական մոտեցում ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության բնորոշման, դրա գնահատման և կանխատեսման համար անհրաժեշտ ցուցանիշների համակարգի վերաբերյալ: Ֆինանսական վերլուծության բազմաթիվ մոտեցումներ մշակված են ձեռնարկատիրական օբյեկտների համար, ինչը թույլ չի տալիս դրանք ամբողջությամբ կիրառել ապահովագրական ընկերությունների համար՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Այդ առանձնահատկությունները դրսևորվում են ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի ձևավորման, դրա օգտագործման արդյունավետության, ֆինանսական դրության գնահատման և ֆինանսական կայունության կանխատեսման ժամանակ: Դա պայմանավորված է նրանով, որ ապահովագրական ընկերությունները հիմնականում ձեռք են բերում փոխառու միջոցներ, որոնք գրեթե միշտ գերակշռում են սեփական միջոցները:

Ապահովագրական ընկերությունները վճարունակության և սեփական կապիտալի հաշվարկման ժամանակ պետք է հաշվի առնեն այն պատահարները, որոնց տեղի ունենալու հավանականությունը շատ փոքր է, բայց պատճառած վնասները՝ ահռելի:

Ներկայումս աշխարհի երկրների մեծամասնությունը անցում է կատարում Solvency I վճարունակության համակարգից Solvency II-ին, իսկ կապիտալի հաշվարկը կատարվում է ռիսկի վրա հիմնված կապիտալի (RBC) ձևավորման վրա: Այս կապակցությամբ ֆինանսական կայունության գնահատման և կանխատեսման նոր մոտեցումների մշակումը և առկա այն մոտեցումների կատարելագործումը, որոնք հարմարեցված կլինեն ՀՀ ապահովագրական շուկայի և ապահովագրական գործունեության կարգավորման ներկա պայմաններին, համարվում է տնտեսագիտական վերլուծության արդիական ուղղություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է առաջարկել ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման գիտականորեն հիմնավորված քայլերի հաջորդականություն (ալգորիթմ), ինչպես նաև կանխատեսման նոր մոտեցում, որը հիմնված է միջազգային լավագույն փորձի վերլուծության վրա և որը կիրառելի կլինի հայաստանյան ներկայիս պայմաններում: Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման և կանխատեսման տեսական, մեթոդական հիմունքները, դրա վրա ազդող գործոնները և առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման և կանխատեսման, ինչպես նաև վճարունակության և կապիտալի նկատմամբ ներկայացվող պահանջները և իրավական ակտերը բոլոր այն երկրներում, որտեղ գործում են նմանատիպ պահանջներ և ընտրել դրանցից լավագույնը,
- բացահայտել ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման առանձնահատկությունները և պարզել հավանականությունների տեսության կիրառման հնարավորությունը ՀՀ ապահովագրական ընկերությունների պահուստների գնահատման ժամանակ և ֆինանսական կայունության կանխատեսման ժամանակ,
- մշակել առաջարկություններ ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման և կանխատեսման համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ ապահովագրական ընկերություններն են, իսկ առարկան՝ ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման և կանխատեսման ուղիները:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը և տեղեկատվական ապահովումը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հայ և օտարազգի գիտնականների աշխատանքներն ու հետազոտությունները, հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, Եվրամիության, Ապահովագրական ընկերությունների վերահսկողների միջազգային Ասոցիացիայի, Միջազգային Աուդիտորական ընկերությունների, արտասահմանյան երկրների ապահովագրական ոլորտի կարգավորման և վերահսկողության նորմատիվաիրավական և օրենսդրական ակտերը, Միջազգային արժույթային ֆոնդի, արտասահմանյան կենտրոնական բանկերի, միջազգային վերաապահովագրական ընկերությունների և այլ կառույցների կողմից հրապարակված նյութերը, հաշվետվությունները և գիտամեթոդական մշակումները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ապահովագրական ընկերությունների հրապարակային հաշվետվությունները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեգրքերը, զեկույցները, միջազգային գիտաժողովների նյութերը, ՀՀ Կենտրոնական բանկի համապատասխան կանոնակարգերը, ինչպես նաև ոլորտին վերաբերող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը և ուղեցույցները:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսական վերլուծության հիմնական եղանակներն ու մեթոդները, մասնավորապես համադրման, վիճակագրական, տրամաբանական, հավանականությունների տեսության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսությունում իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները հանգեցրել են մի շարք արդյունքների, որոնցից գիտական նորույթ են դիտարկվում հետևյալները.

- Գնահատվել է ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի, ֆինանսական դրության, ֆինանսական կայունության կանխատեսման միջև կապը ալգորիթմի միջոցով, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ որպես ապահովագրական ընկերությունների ֆինանսական դրության գնահատման նախապայման:
- ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման համար չվաստակաժ ապահովագրավճարների և պահանջների պահուստները դասակարգվել են ըստ ապահովագրության դասերի՝ համաձայն նորմալ, ցուցային և Պարետո բաշխման օրենքների, ինչը հիմք է հանդիսացել կրկնօրինակող պորտֆելի ձևավորման համար:
- Հիմնվելով կատարած վերլուծությունների արդյունքների և կրկնօրինակող պորտֆելի ձևավորման վրա՝ մշակվել են ՀՀ ապահովագրական ընկերությունների բացարձակ, արագ և ընթացիկ իրացվելիության գործակիցների նոր միջակայքեր:
- ՀՀ ապահովագրական ընկերությունների նվազագույն կապիտալը վերահաշվարկվել է ռիսկի վրա հիմնված նվազագույն կապիտալի հաշվարկման կանադական մոտեցմամբ՝ հաշվի առնելով ապահովագրական, վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը, ինչպես նաև դիվերսիֆիկացիայի կրեդիտը: Բացի այդ առաջարկվում է կիրառել վճարունակության նոր ցուցանիշ և դրա հաշվարկման նկատմամբ մոտեցումներ:
- ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը կանխատեսվել է սթրես թեսթավորման եղանակով՝ հիմնվելով պահանջների պահուստի և չվաստակաժ ապահովագրավճարների պահուստի սթրես սցենարների վրա: Առաջարկվել է համախառն ապահովագրավճարների պորտֆելի կանխատեսման նոր մոտեցում, որը հիմնված է յուրաքանչյուր ապահովագրության դասի համար ըստ եռամսյակների համախառն ապահովագրավճարների աճի դինամիկաների որոշման, միջին մեծությունների և վարիացիայի գործակցի հաշվարկման և միջին քառակուսային շեղման կիրառման վրա:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական

նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հետազոտությունների հիման վրա մշակվել է ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման

ալգորիթմ, ապահովագրական ընկերությունների վճարունակության և իրացվելիության գնահատման նոր մոտեցում, ինչպես նաև մշակվել են կանխատեսման սթրես սցենարներ, որոնք բացահայտում են ընկերության ֆինանսական կայունության հնարավոր փոփոխությունները: Հետազոտության արդյունքները կարող են հիմք հադիսանալ ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից հավաքագրվող ապահովագրավճարների մեծության կանխատեսման, պահուստների բաշխման օրենքների տեսակների որոշման, իրացվելիության և վճարունակության հաշվարկման և կանխատեսման, ինչպես նաև ռիսկի վրա հիմնված կապիտալի հաշվարկման համար: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառելի լինել ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ ապահովագրական ընկերությունների աշխատակիցների, գիտաշխատողների և ուսանողների համար:

Ատենախոսության փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները և ստացված արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Բանկային գործի և ապահովագրության ամբիոնի նիստերում, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովում, միջազգային կոնֆերանսներում: Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված 8 գիտական հոդվածում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը՝ ներառյալ գրականության ցանկը, կազմում է 162 համակարգչային էջ, այն ներառում է 33 աղյուսակ, 19 գծապատկեր և 27 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին «Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության տեսամեթոդական հիմքերը» գլխում դիտարկվել է ֆինանսական կայունության դերը և նշանակությունը ապահովագրության ոլորտում: Հեղինակի կողմից դասակարգվել են ֆինանսական կայունության բնորոշումները, մասնավորապես, ծեռնարկության հաշիվների¹, սեփական և փոխառու միջոցների օպտիմալ մակարդակի², հաշվապահական հաշվառման³, վարկային և վճարային գործառնությունների⁴, մրցակցության և ռիսկի⁵, ֆինանսական անկայունության⁶ տեսանկյունից: Արդյունքում ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը բնորոշվել է որպես ապահովագրական ընկերության ֆինանսական ռեսուրսների այնպիսի վիճակ, որն ապահովում է ընկերության իրացվելիությունը, վճարունակությունը և շահութաբերությունը՝ սակագնային, անդերոայթինգային, ներդրումային և շահութաբաժնային համապատասխան քաղաքականության մշակման միջոցով: Ընդ որում, ֆինանսական կայունությունը պահպանելու համար ընկերությունը պետք է կարողանա ժամանակի ցանկացած պահի դրությամբ կառավարել առկա ռիսկերը մրցակցության պայմաններում՝ կատարելով ապահովադիրների նկատմամբ առկա պարտավորությունները և մաքսիմալացնելով սեփականատերերի բարեկեցությունը: Բացի այդ, հեղինակի կողմից ուսումնասիրվել և մեկնաբանվել են ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի և ֆինանսական դրության սահմանումները: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ չնայած տնտեսագիտական գրականության մեջ առկա են ֆինանսական ներուժի սահմանման տարաբնույթ մոտեցումներ, սակայն ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները շատ սակավ են, այն դեպքում, երբ հենց ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետությունն է հիմք հանդիսանում ֆինանսական դրության և ֆինանսական կայունության համար: Ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի, ֆինանսական դրության և ֆինանսական կայունության ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից առաջարկվում է ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման ցիկլը ներկայացնել գծապատկերի տեսքով՝ (Գծապատկեր 1):

¹ Шермет А.Д. и др., Методика финансового анализа, М., ИНФРА-М., 2011г., 352 стр., стр. 231


² Кабанцева Н.Г. Страхование дело, издательство “ФОРУМ”, 2008г. 147 стр., электронный ресурс: <http://finbook.news/strahovanie-book/finansovaya-ustoychivost-strahovoy-kompanii.html>

³ Сплетухов Ю.А., Дюжигов Е.Ф., Страхование, Москва, М.: ИНФРА-М, 2007. -312стр., стр. 283

⁴ Eric S. Rosengren, Defining Financial Stability, and Some Policy Implications of Applying the Definition, Stanford University, June 3, 2011, электронный ресурс: <http://www.bostonfed.org/news/speeches/rosengren/2011/060311/>

⁵ Гиляровская Л.Т. Анализ и оценка финансовой устойчивости коммерческих организаций, М., ЮНИТИ, 2011, 159 стр., стр.7

⁶ Davis, E. A Typology of Financial Instability, Oesterreichische Nationalbank (Central Bank of Austria), 2001, Financial Stability Report No. 2, 176pg., pg. 92-110.



Գծապատկեր 1. Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման ցիկլի ալգորիթմ⁷

Որտեղ՝

X_i -երը ապահովագրական ընկերության գործունեությունը ներկայացնող և ֆինանսական ներուժը հաշվարկելու համար ընտրված ցուցանիշներն են, $i=1, \dots, m$; $m \in \{1, N\}$, որտեղ N -ը ապահովագրական ընկերության գործունեությունը բնութագրող ցուցանիշների քանակն է:

δ -ն ապահովագրական ընկերության շահութաբերության շեմն է,

$\delta < \delta$ -համախառն հարաբերական մարժան է,

$\delta < \delta$ -ապահովագրական ընկերության հաստատուն ծախսերն են,

δ - ապահովագրական ընկերության շահույթն է,

$\delta < \delta$ -ն տվյալ տարվա համար հաշվարկված ֆինանսական կայունության պաշարն է,

$\delta < \delta$ -ն նախորդ տարում հաշվարկված կամ ընկերության կողմից սահմանված նորմատիվային ֆինանսական կայունության պաշարն է,

$\delta < \delta$ -ն տվյալ տարվա համար հաշվարկված ֆինանսական կայունությունն է,

$\delta < \delta$ -ն նախորդ տարում հաշվարկված կամ ընկերության կողմից սահմանված նորմատիվային ֆինանսական կայունությունն է:

Ատենախոսության երկրորդ «**ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության գնահատման հիմնախնդիրները**» գլխում ուսումնասիրվել են ֆինանսական կայունության միջազգային պրակտիկայում առկա

⁷ Գծապատկերը կառուցել է հեղինակը

գնահատման մոտեցումները և սկզբունքները և ՀՀ ապահովագրական շուկայի համապատասխանությունը դրանց⁸: Ապա հիմնավորվել է ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետության գնահատումը՝ որպես ֆինանսական կայունության գնահատման և կանխատեսման նախապայման: Գնահատումը կատարվել է Ի.Վ.Յարոցկիի կողմից առաջարկված մոտեցմամբ⁹, քանի որ այն թույլ է տալիս ապահովագրական ընկերություններին՝

- բավականին արագ գնահատել գործունեության արդյունավետությունը,
- հայտնաբերել այս կամ այն գործակցի շեղումը, ախտորոշել դրա պատճառը, և պարզել, թե ինչպես է դա ազդում ֆինանսական կայունության վրա,
- հաջորդ եռամսյակի համար հնարավորինս վերացնել շեղումները և ընկերության գործունեությունը հասցնել զարգացման բարձրագույն մակարդակի:

Գնահատման արդյունքներից պարզ է դարձել, որ ապահովագրական ընկերությունները ֆինանսական ներուժի օգտագործման դեպքում, ունեն մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են սեփական կապիտալի նվազագույն չափի անբավարարության, վճարունակության խնդիրների առկայության և վերաապահովագրական ակտիվները հաշվարկների մեջ ներառելու անհրաժեշտությամբ:

Ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետությունը գնահատելուց հետո գնահատվել են ՀՀ ապահովագրական ընկերությունների ապահովագրավճարների պորտֆելը և ապահովագրական պարտավորությունները:

Կատարված վերլուծությունների արդյունքում հեղինակն առաջարկում է գալիք տարվա եռամսյակների համար համախառն ապահովագրավճարների (բացի ԱՊՊԱ-ից և իրականացվելիք պարտադիր ապահովագրության այլ տեսակների) կանխատեսվող աճի տեմպը հաշվարկել հետևյալ բանաձևերի միջոցով (1), (2), (3), (4)¹⁰

$$\begin{cases} X_{i \text{ կանխ.}} = X_{i \text{ վիճ.}} \cdot k_{\text{ԲԵ}} & V_i \leq 33\% \\ X_{i \text{ կանխ.}} = (X_{i \text{ վիճ.}})' & k_{\text{ԲԵ}} > 33\% \end{cases} \quad (1)$$

$$V_i = \frac{S_i}{X_{i \text{ վիճ.}}}, \quad i = 1, \dots, n \quad (2)$$

$$U_{\text{Հ}i} = X_{i \text{ կանխ.}} \cdot U_{\text{Հ}i, n-1, m-1} \quad (3)$$

⁸ Исполнительный комитет СНГ, Современное состояние страхового надзора и регулирование страховой деятельности в государствах – участниках СНГ (информационно-аналитический материал), 54 стр., 8стр.

⁹ Яроцкий И.В., Методический подход к оценке финансового потенциала страховой организации, Экономика и управление, N3, 2012г. 9 стр., стр. 2,

¹⁰ Բանաձևերը առաջարկվել են հեղինակի կողմից

$$\sum_{i=1}^n X_{i \text{ փասնիչ}} = (X_{1 \text{ փասնիչ}} + X_{2 \text{ փասնիչ}} + \dots + X_{n \text{ փասնիչ}}) \pm \delta, \quad (4)$$

որտեղ՝

X_i կանխ.- գալիք եռամսյակի i -րդ դասի գծով համախառն ապահովագրավճարների աճի տեմպն է,

$X_{i \text{ փասնիչ}-m}$ - n -րդ տարվա m -րդ եռամսյակի i -րդ դասի գծով համախառն ապահովագրավճարների կանխատեսվող աճի տեմպն է

X_i միջ.- ապահովագրության i -րդ դասի գծով դիտարկումների միջին մեծությունն է, (X_i միջ.)- ապահովագրության i -րդ դասի գծով հարթեցված միջին մեծությունն է, ընդ որում հարթեցված միջինն առաջարկում ենք հաշվել հետևյալ կերպ: Հաշվել շարքի բոլոր դիտարկումների միջին մեծությունը և ակնհայտ բարձր կամ ցածր արժեքները փոխարինել միջին մեծությամբ: Գործընթացը կրկնել այնքան անգամ, մինչև որ վարիացիայի գործակիցը դառնա փոքր 33%-ից¹¹:

V_i -ապահովագրության i -րդ դասի գծով վարիացիայի գործակիցն է,

$i=1, \dots, n$ -ապահովագրական ընկերության կողմից իրականացվող ապահովագրության տեսակներն են,

$\sum_{i=1}^n X_{i \text{ փասնիչ}}$ - գալիք եռամսյակի համար համախառն ապահովագրավճարների կանխատեսվող մեծությունն է,

$U_{i, n-1, m-1}$ - $n-1$ -րդ տարվա $m-1$ -րդ եռամսյակի դրությամբ i -րդ դասի գծով հավաքագրված համախառն ապահովագրավճարների մեծությունն է,

$U_{i, 2, 1}$ - i -րդ դասի գծով հավաքագրված համախառն ապահովագրավճարների կանխատեսվող մեծությունն է,

δ - ն միջին քառակուսային շեղումն է:

«Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը գնահատվել է ֆինանսական և մարքեթինգային (SWOT վերլուծության) տեսանկյունից, որի արդյունքում պարզ է դարձել, որ «Ապահովագրական ընկերությունները պետք է կատարեն՝

1. Նվազագույն կապիտալի վերահաշվարկ,
2. Պարտավորությունների լավագույնս գնահատում,
3. Ռիսկային մարժայի սահմանում,
4. Իրացվելիության նորմատիվի վերահաշվարկ,
5. Վճարունակության նորմատիվի սահմանում:

Ատենախոսության երրորդ «Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության բարելավումն ու կանխատեսումը» գլխում ուսումնասիրվել են բոլոր երկրների վճարունակության և կապիտալի նկատմամբ

¹¹ Иода Е.В., Герасимов Б.И., “Статистика”: Тамбов: Изд-во гос. техн. ун-та, 2004. 104 с., стр. 20

պահանջները: Արդյունքում իրականացվել է ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման համար չվաստակաձ ապահովագրավճարների և պահանջների պահուստների լավագույնս գնահատում և դասակարգում՝ ըստ ապահովագրության դասերի՝ համաձայն նորմալ, ցուցչային և պարետո բաշխման օրենքների, ինչը հիմք է հանդիսացել կրկնօրինակող պորտֆելի (replicating portfolio) ձևավորման համար: Հեղինակի կողմից կատարվել է 2011-2015թթ. ըստ եռամսյակների հրապարակային հաշվետվությունների վերլուծություն և արդյունքների ամփոփում: Վերջինս հիմք է հանդիսացել ՀՀ ապահովագրական ընկերությունների իրացվելիության գործակիցների վերահաշվարկման և նոր միջակայքերի սահմանման համար:

Իրացվելիության նորմատիվի հաշվարկից հետո կատարվել է ՀՀ ապահովագրական ընկերությունների Ռիսկի վրա Հիմնված Նվազագույն Կապիտալի (ՌՀՆԿ) հաշվարկ՝ ըստ Կանադական «Նվազագույն կապիտալի թեսթի» ուղեցույցի¹² (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ապահովագրական ընկերությունների ՌՀՆԿ-ները հզր դրամ, մինչև դիվերսիֆիկացիայի կրեդիտի ազդեցությունը ՌՀՆԿ-ում յուրաքանչյուր ռիսկի տեսակարար կշիռը և Կանոնադրական կապիտալ/ՌՀՆԿ հարաբերակցությունը

	Ռուգոստորային Արմենիա	Ինգո Արմենիա ԱՓԲԸ	Նաիրի Ինշուրանս ԱՄՊԸ	Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ	Արմենիա Ինշուրանս ԱՊԸ
Ապահովագրական ռիսկ, %	54%	44%	36%	64%	31%
Շուկայական ռիսկ (միայն տոկոսադրույքի փոփոխության ռիսկ), %	12%	35%	3%	1%	1%
Վարկային ռիսկ (միայն հաշվեկշռային հոդվածների ռիսկ), %	18%	6%	42%	21%	54%
Գործառնական ռիսկ, %	16%	15%	19%	14%	15%
ՌՀՆԿ	1,394,912	1,589,184	624,948	879,247	372,665
Փաստացի Կանոնադրական կապիտալ/ՌՀՆԿ	285%	160%	206%	224%	257%

Արդյունքում հաշվարկվել է վճարունակության նորմատիվ՝ որպես Կանոնադրական կապիտալի և ՌՀՆԿ հարաբերություն: Գործակիցը չպետք է լինի փոքր 200%, հակառակ դեպքում ընկերությունը պետք է ձեռնարկի օրենսդրորեն սահմանված քայլեր¹³:

Քանի որ միշտ չէ, որ ընկերության կողմից ըստ բաշխման օրենքների հաշվարկված ապագա դրամական հոսքերը կարող են բավարար լինել ապահովագրական ընկերության համար պարտավորությունները կատարելիս,

¹² Office of the Superintendent of Financial Institutions Canada, “Minimum Capital Test, For federally Regulated Property and Casualty Insurance Companies”, Guideline, No A, 2016 January 1, 79 pg.

¹³ Risk-Based Capital for Insurers in the United States, 20pg. pg.2 (https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=2&ved=0ahUKEWifj8fQ_ovPAhWFDxoKHesUAT8QFggIMAE&url=http%3A%2F%2Frmftf.soa.org%2Ffriskbased_capital.pdf&usg=AFQjCNFwQ_YmyWsEtk2NkyLq-IfDtXL7HQ)

հեղինակի կողմից հաշվարկվել է նաև դիսկային մարժա, որը կարող է ծածկել միջոցների պակասուրդը: Այն հաշվարկվել է լավագույնս գնահատված պարտավորությունների, ՌՀՆԿ-ի, դիսկոնտավորման տոկոսադրույքի և ներկայիս բերված արժեքի հիման վրա:

ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը գնահատելուց հետո, հեղինակի կողմից իրականացվել է կայունության կանխատեսում՝ սթրես թեստավորման եղանակով: Մշակվել է երկու սցենար: Սցենարները կառուցվել են հաշվի առնելով պահանջների պահուստի և ՉԱՊ-ի՝ ըստ ապահովագրության դասերի բաշխման օրեքները և 95% քվանտիլային հավանականությամբ ընկերության **αVaR** մեծության հասնելը, ապա **TailVaR** մեծությունները: Համաձայն **սթրես-սցենար N1**-ի՝ հրդեհից և բնական աղետներից ու ֆինանսական վնասներից ապահովագրության պահանջների պահուստների մեծությունները միաժամանակ հավասարվել են համապատասխան TVaR մեծություններին, ընդ որում, այդ երկու պատահարների միաժամանակյա տեղի ունենալու հավանականությունը 1% է (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Ռոզոսստրախ Արմենիա ԱՓԲԸ-ի պահանջների պահուստի՝ ըստ ապահովագրության դասերի բաշխման օրենքները, αVaR, TVaR, և TVaR մեծությամբ հասնելու հավանականությունը (100 մլն ՀՀ դրամ)

Ապահովագրության դաս	Բաշխման օրենք	αVaR	TVaR	Միջին մեծություններ	Միջին մեծություններ և հրդեհից ու ֆին.վնասների TVaR մեծ.	Պատահար տեղի ունենալու հավանականություն
Ղժբախտ պատահարներ	պարետո	0.1208	0.1808	0.0086	0.0086	9%
Առողջություն	ցուցային	7.6413	7.6413	2.5507	2.5507	9%
Աջակցություն	նորմալ	0.3962	0.4571	0.1237	0.1237	9%
Հրդեհ և բնական աղետներ	պարետո	7.4828	9.1266	0.3318	9.1266	9%
Փոխադրվող գույք (բեռներ)	նորմալ	0.0067	0.7715	0.0007	0.0007	9%
Ցամաքային տրանսպորտ	նորմալ	1.8579	2.0050	1.0330	1.0330	9%
Լրացուցիչ ԱՊՊԱ	նորմալ	0.1222	0.1390	0.0307	0.0307	9%
Ըղիանուր պատասխանատվություն	պարետո	0.6296	0.6296	0.0027	0.0027	9%
Վարկ	պարետո	1.1489	1.1489	0.0683	0.0683	9%
Ֆինանսական վնասներ	պարետո	2.6448	4.0631	0.1467	4.0631	9%
ԱՊՊԱ	նորմալ	14.1371	16.0969	8.2382	8.2382	9%
Ընդամենը		36.1883	42.2599	12.5351	25.2464	100%

Համաձայն հեղինակի վերլուծությունների՝ բացարձակ իրացվելիության գործակցի նվազագույն շեմը 0.2 է, հետևաբար այս դեպքում ևս ընկերության իրացվելիությունը նվազագույնից ցածր է: Նույնիսկ այն դեպքում, երբ պահանջների պահուստի մեծությունը որևէ դասի գծով չի հասնում TVaR մեծությանը, ընկերության բացարձակ իրացվելիությունը կրկնօրինակող պորտֆելի տեսանկյունից մնում է

նվազագույն շեմի վրա, ինչը նշանակում է, որ ցանկացած պահի ընկերությունը կարող է կորցնել բացարձակ իրացվելիությունը: Հեղինակի կարծիքով, ընկերության բացարձակ իրացվելիությունը պետք է հասնի 0.2-ի, հետևաբար ընկերությունը պետք է ունենա՝ $Կրկնօրինակող պորտֆել/5,527,188=0.2$, հետևաբար Կրկնօրինակող պորտֆել= $1,105,438$ հազար ՀՀ դրամ:

Նշանակում է, որ, եթե Ռուսգոսստրախ Արմենիա ԱՓԲԸ-ն ձեռք բերեր $1,105,438-687,983=417,455$ հազար ՀՀ դրամի պարտատոմս, ապա բացարձակ իրացվելիության խնդիր չէր ունենա: Այս դեպքում ընկերությունը կարող է իր բանկային ավանդների ընդամենը $(393,200/5,605,846) \times 100\%=7\%$ -ով նվազեցնել, ձեռք բերել պետական պարտատոմսեր և ձևավորել բավարար կրկնօրինակող պորտֆել:

Սթրես-սցենար N2-ի համաձայն՝ սթրեսի է ենթարկվում չվաստակած ապահովագրավճարների պահուստը: Ինչպես սթրես-սցենար N1-ում, այնպես էլ սթրես-սցենար N2-ում որոշվել են «Ռուսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ՉԱՊ-ի՝ ըստ ապահովագրության դասերի բաշխման օրենքները, **αVaR, TVaR, և TVaR մեծությանը հասնելու հավանականությունները**, որոնք արտացոլվել են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

«Ռուսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի ՉԱՊ-ի՝ ըստ ապահովագրության դասերի բաշխման օրենքները, αVaR, TVaR, և TVaR մեծությանը հասնելու հավանականությունը (100,000,000 ՀՀ դրամ)

Ապահովագրության դաս	Բաշխման օրենք	αVaR	TVaR	Միջին մեծություններ	Միջին մեծություններ և TVaR ԱՊՊԱ-ի դեպքում	TVaR մեծությանը հասնելու հավանականություն
Դժբախտ պատահարներ	Նորմալ	0.6462	0.6735	0.3812	0.3812	1/13=8%
Առողջություն	Ցուցային	17.6525	22.1706	5.8925	5.8925	1/13=8%
Աջակցություն	Նորմալ	0.7831	0.8329	0.4507	0.4507	1/13=8%
Հրդեհից և բնական աղետներ	Նորմալ	4.9728	4.9979	3.0588	3.0588	1/13=8%
Փոխադրվող գույք (բեռներ)	Պարետո	4.4716	4.4716	0.4732	0.4732	1/13=8%
Ցամաքային տրանսպորտ	Նորմալ	3.5802	3.9357	2.2569	2.2569	1/13=8%
Լրացուցիչ ԱՊՊԱ	Նորմալ	0.4471	0.4684	0.2180	0.2180	1/13=8%
Ընդհանուր պատասխանատվություն	Ցուցային	2.6400	2.6400	0.8812	0.8812	1/13=8%
Վարկ	Ցուցային	5.5859	7.7002	1.8646	1.8646	1/13=8%
Ֆինանսական վնասներ	Ցուցային	2.7431	3.2792	0.9157	0.9157	1/13=8%
Օդանավեր	Ցուցային	1.7746	2.2415	0.5924	0.5924	1/13=8%

Քանի որ հեղինակի կողմից կատարված հաշվարկում չեն ընդգրկվում արժեթղթերը, որոնց ժամկետը 7 տարի է, ապա Ռուսգոսստրախ Արմենիա ԱՓԲԸ-ն պետք է ձևավորի ևս $6,822,627-6,201,971=620,656$ հզր. ՀՀ դրամի դրամական հոսք: Այս դեպքում ընկերությունը կարող է իր պարտատոմսերում ներդրումները բաշխել կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի միջև հավասարաչափ, այն դեպքում, երբ միջնաժամկետ արժեթղթերի մեծությունը կազմում է $1,174,748$

հզր. ՀՀ դրամ: Հետևաբար, ընկերությունը կունենար և բավարար չափի կրկնօրինակող պորտֆել և բացարձակ իրացվելի ակտիվներ սթրես իրավիճակներում դիմակայելու համար:

Ստացվում է, որ ԱՊՊԱ-ի TVaR արժեքին հասնելը ավելացնում է ապահովագրական ռիսկը ՌՀՆԿ-ի հաշվարկում $(1,148,930/1,307,198) \times 100\% = 87.9$, $100\% - 87.9\% = 12.1\%$ -ով, իսկ Ընդամենը ՌՀՆԿ փոխվում է $1,394,912/1,505,593 = 92\%$, $100\% - 92\% = 8\%$ -ով: Այս դեպքում ընկերությունը կարող է լրացուցիչ կապիտալի նվազեցման շնորհիվ ապահովել բավարար մակարդակի ՌՀՆԿ, առանց լրացուցիչ էմիսիայի:

Ատենախոսության **«Եզրակացություն»** բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, կատարվել են կարևոր եզրահանգումներ և առաջարկություններ:

1. Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը բնորոշել որպես ապահովագրական ընկերության ֆինանսական ռեսուրսների այնպիսի վիճակ, որն ապահովում է ընկերության իրացվելիությունը, վճարունակությունը և շահութաբերությունը՝ սակագնային, անդերոայթինգային, ներդրումային և շահութաբաժնային համապատասխան քաղաքականության մշակման միջոցով: Ընդ որում, ֆինանսական կայունությունը պահպանելու համար ընկերությունը պետք է կարողանա ժամանակի ցանկացած պահի դրությամբ կառավարել առկա ռիսկերը մրցակցության պայմաններում՝ կատարելով ապահովադիրների նկատմամբ առկա պարտավորությունները և մաքսիմալացնելով սեփականատերերի բարեկեցությունը:

2. Չնայած ՀՀ ապահովագրական ընկերություններն ունեն ֆինանսական կայունության գնահատման միջազգային պրակտիկային համապատասխան CAMELS ցուցանիշների համակարգ, սակայն այն չի կարող ամբողջական պատկերացում տալ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության մասին: Առաջարկում ենք, որ ապահովագրական ընկերությունները բացի CAMELS ցուցանիշների համակարգի կիրառումից, իրականացնեն իրենց ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետության գնահատում: Ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետության հաշվարկը թույլ կտա ապահովագրական ընկերություններին ժամանակին բացահայտել այն հիմնախնդիրները, որոնք կարող են տանել ֆինանսական դրության վատթարացման և, հետևաբար, կայունության անկման:

3. Առաջարկվում է ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի գնահատումը կատարել հեղինակի կողմից մշակված ալգորիթմին (Գծապատկեր 1.) համապատասխան, ֆինանսական դրությունը գնահատել ՌԴ բանկերի կողմից մշակված ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության

ցուցանիշների հաշվարկման համակարգի միջոցով¹⁴ և նոր անցնել ֆինանսական կայունության կանխատեսմանը՝ սթրես թեստավորման եղանակով:

4. ՀՀ ապահովագրական ընկերությունները ամբողջովին չեն օգտագործում իրենց ֆինանսական ներուժը: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել վերանայել Ի.Վ.Յարոցկիի կողմից առաջարկված մոտեցմամբ¹⁵ հաշվարկված K1, K3, K4, K5, K10 գործակիցները:

5. ՀՀ ապահովագրական ընկերության ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետությունը գնահատելուց և առկա խնդիրները ձևակերպելուց հետո առաջարկում ենք ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական դրությունը գնահատել ֆինանսական եղանակով՝ ֆինանսական համապատասխան ցուցանիշների համակարգի կիրառման և մարքեթինգային եղանակով, այսինքն՝ SWOT վերլուծության միջոցով: Այս երկու եղանակների կիրառման արդյունքում հիմնավորվել է, որ ՀՀ ապահովագրական ընկերությունները պետք է իրականացնեն պարտավորությունների լավագույնս գնահատում, Կանոնակարգ 3/02-ում ներառեն վճարունակության նորմատիվը և վերանայեն իրացվելիության և նվազագույն կապիտալի հաշվարկը:

6. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերություններին ներկայացվող օրենսդրական պահանջներում ներառված է ապահովագրական, վարկային, արտարժույթային և գործառնական ռիսկերի հաշվարկը և կապիտալի ձևավորման համար անհրաժեշտ աղբյուրների որակի պահպանումը, սակայն կապիտալը կառուցված չէ այդ ռիսկերի ընդգրկմամբ և 95.0%-99% TVaR ճշտությամբ, որը կարող է նախապայման հանդիսանալ ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական անկայունության համար: Այժմ երկրների մեծամասնությունը անցում է կատարում Solvency I-ից Solvency II համակարգին և ՀՀ ապահովագրական համակարգն ունի գրեթե բոլոր հնարավորությունները անցում կատարելու միջազգային պրակտիկայում առկա ստանդարտներին, որի մասին են վկայում և Ապահովագրական ընկերությունների վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից մշակված ստանդարտների համապատասխանությունը և ԱՄՀ-ի (IMF) կողմից կատարված վերլուծությունը: Առաջարկում ենք, որ ՀՀ ապահովագրական շուկան ևս անցում կատարի Solvency II համակարգին:

7. ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռը առաջարկվում է կառուցել Solvency II մեթոդաբանությանը համապատասխան՝

¹⁴ <http://www.kombank.ru/upload/2015/08/24/PokazateliFUSK.pdf>, Агрегированный алгоритм расчета показателей финансовой устойчивости страховой компании РФ созданный банками.

¹⁵ Яроцкий И.В., Методический подход к оценке финансового потенциала страховой организации, Экономика и управление, N3, 2012г. 9 стр., стр. 2,

հաշվի առնելով ՀՀ ապահովագրական ընկերությունների առանձնահատկությունները:

8. Չնայած ՀՀ ապահովագրական ընկերություններն ունեն ֆինանսական կայունության բավարար մակարդակ, սակայն ֆինանսական կայունության առավել ճիշտ գնահատման համար ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը վերահսկող մարմնի՝ ՀՀ ԿԲ-ի կողմից, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է ներառել օրենսդրական համապատասխան պահանջ, որպեսզի ընկերությունները իրենց ֆինանսական կայունությունը գնահատելիս կիրառեն սթրես սցենարներ, որոնք կարող են ժամանակին կանխել անկայունությունը:

9. ՀՀ ապահովագրական ընկերության ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից որոշվել են ՉԱՊ-ի և ՆՉՊՊ-ի ըստ ապահովագրության դասերի բաշխման օրենքները: Դա թույլ է տալիս առավել ճիշտ գնահատել ֆինանսական կայունությունը: Ըստ Շվեյցարական նվազագույն վճարունակության թեսթավորման համակարգի, որը լավագույնն է համաշխարհային պրակտիկայում, առաջնահերթ ուշադրություն է դարձվում բաշխման օրենքների որոշմանը, քանի որ հենց դրանց միջոցով կարելի է պարզել, թե ապահովագրական ընկերությանը որքան դրամական միջոց է հարկավոր ներկայում, որպեսզի ապագայում մարի իր պարտավորությունները և ձևավորի կրկնօրինակող պորտֆել:

10. Բացարձակ իրացվելիության պահպանման համար ՀՀ ապահովագրական ընկերություններում նպատակահարմար է ստեղծել կրկնօրինակող պորտֆել: Դրա համար անհրաժեշտ բավարար դրամական միջոցների մակարդակը նպատակահարմար է հաշվարկել ելնելով ապահովագրական պարտավորությունների բաշխումից, որոնք ներկայացվել են առենախոսության 2-րդ գլխում:

11. ՀՀ ապահովագրական ընկերությունների բացարձակ, արագ և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների համար մշակվել են միջակայքեր՝ ելնելով ապահովագրական շուկայի 5 տարվա՝ ըստ եռամսյակների տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքների:

12. Ռիսկի վրա հիմնված կապիտալը անհրաժեշտ է կառուցել՝ հաշվի առնելով ապահովագրական, շուկայական, վարկային և գործառնական ռիսկերը: Ընդ որում, ՀՀ ապահովագրական ընկերությունները առանձին հաշվարկում են թվարկված ռիսկերը և պահպանում հաշվարկի պահանջները, հետևաբար ՀՀ ապահովագրական ընկերությունների համար առավել նպատակահարման է կառուցել կապիտալը այդ մեթոդաբանությամբ՝ օգտվելով կանադական մոդելից: Այնուհետև հաշվարկել ռիսկային մարժան, որը ժամանակին կանխում է դրամական հոսքերի պակասուրդը:

13. ՀՀ ապահովագրական ընկերությունների համար հաշվարկել նաև ռիսկի վրա հիմնված կապիտալի ցուցանիշը կամ վճարունակության ցուցանիշը, որը նպատակահարմար է ներառել ոլորտը վերահսկող մարմնի համապատասխան

կանոնակարգերում (Կանոնակարգ 3/02) օրենսդրորեն և որը կհաշվարկվի որպես Կանոնադրական կապիտալի և ռիսկի վրա հիմնված նվազագույն կապիտալի փաստացի մեծությունների հարաբերություն: Այն ընկերությունները, որոնց վճարունակության գործակիցը ցածր կլինի 200%-ից, նպատակահարմար է դիմեն ատենախոսության 120-րդ էջում նշված միջոցառումների ցանկին:

14. ՀՀ ԿԲ-ն համապատասխան նորմատիվաիրավական փաստաթղթերում և կանոնակարգերում անհրաժեշտ է, որ ներառի ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից՝ ըստ ապահովագրության դասերի պահանջների պահուստի և ՉԱՊ-ի բաշխման օրենքների ներկայացումը համապատասխան հաշվետվության տեսքով՝ հաշվարկների ճշտությունն ապահովելու համար ամսեկան կտրվածքով: Բացի այդ ապահովագրական ընկերությունները ՀՀ ԿԲ-ին ներկայացնեն հաշվետվություն Ռիսկի վրա հիմնված Կապիտալի և ռիսկային մարժայի վերաբերյալ: ՀՀ ԿԲ համապատասխան նորմատիվաիրավական փաստաթղթերում և կանոնակարգերում բացի հաշվարկների մեթոդաբանությունից, առաջարկվում է ներկայացնել հաշվարկների պայմանական օրինակներ:

15. Առաջարկվում է ՀՀ ապահովագրական ընկերությունների համախառն ապահովագրավճարների մեծությունը կանխատեսել յուրաքանչյուր ապահովագրության դասի համար ըստ եռամսյակների համախառն ապահովագրավճարների աճի դինամիկաների որոշման, միջին մեծությունների և վարիացիայի գործակցի հաշվարկման և, ըստ անհրաժեշտության, միջին քառակուսային շեղման կիրառմամբ: Մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ այն բացահայտում է յուրաքանչյուր դասի գծով հավաքագրված ապահովագրավճարների օրինաչափությունը և թույլ է տալիս կանխատեսել, թե միջինում ՀՀ ապահովագրական ընկերությունները որքան ապահովագրավճար կհավաքագրեն:

16. ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը արդյունավետ է կանխատեսել սթրես թեսթավորման միջոցով մշակված սցենարներով, որոնք թույլ են տալիս հաշվի առնել այնպիսի դեպքեր, որոնց տեղի ունենալու հավանականությունը շատ փոքր է, սակայն պատճառված վնասները կարող են լինել նշանակալի:

17. ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից հավաքագրած ապահովագրավճարների արտահոսքը կանխելու համար առաջարկում ենք ԵԱՏՄ տարածաշրջանում թողարկել աղետային պարտատոմսեր և գույքի ու վարկի ապահովագրության գծով հավաքագրած ապահովագրավճարների մի մասը սկզբնական ժամանակաշրջանում վերաապահովագրության փոխանցել՝ ձեռք բերելով աղետային պարտատոմսեր:

Ատենախոսության հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Հարությունյան Գ.Յու., Վճարունակության մարտայի հաշվարկը՝ որպես ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն ցուցանիշ (Ռուսոստրախս Արմենիա ԱՓԲԸ-ի օրինակով)// Ֆինանսներ և էկոնոմիկա, N3 (165), մարտ, Երևան 2014թ., էջ 34-36:
2. Հարությունյան Գ.Յու., Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության վարկանիշային գնահատումը// Ֆինանսներ և էկոնոմիկա, N4 (166), ապրիլ, Երևան 2014թ., էջ 59-60:
3. Հարությունյան Գ.Յու., Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ռազմավարական SWOT վերլուծությունը// ՀՊՏՀ, 24-րդ գիտաժողով, Զարգացման ժամանակակից մարտահրավերները, 2014թ. Հոկտեմբերի 29-31, Երևան, Տնտեսագետ, 2015, էջ 592-597:
4. Арутюнян Г.Ю., Глобализация страхового рынка Армении на пути развития Евразийского экономического союза// “Science and Innovation 2015” International Youth Conference, National Center of Innovation and Entrepreneurship of Ministry of Economy RA, 2015, pg. 19-25:
5. Հարությունյան Գ.Յու., Ապահովագրական ընկերության ֆինանսական ներուժի և ֆինանսական կայունության փոխկապվածության սկզբունքները// Ֆինանսներ և էկոնոմիկա, N3-4 (187-188), Երևան, 2016թ., էջ 37-39:
6. Հարությունյան Գ.Յու., ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռների իրացվելիության գնահատման նոր մոտեցում՝ ֆինանսական կայունության տեսանկյունից// Ֆինանսներ և էկոնոմիկա, N5-6 (189-190), Երևան, 2016թ., էջ 80-82:
7. Հարությունյան Գ.Յու., Աթանյան Ա.Ա., ՀՀ ապահովագրական ընկերությունների ֆինանսական ներուժի օգտագործման արդյունավետության գնահատումը// Այլընտրանք, N2, Ապրիլ-Հունիս, Երևան, 2016 թ., էջ 301-309:
8. Арутюнян Г.Ю., Прогнозирование страхового портфеля страховых компаний РА// IX-я Международная школа-семинар “Многомерный статистический анализ и эконометрика”, Цахкадзор, Республика Армения, Труды, ЦЭМИ РАН, Москва, 2016г., стр. 61-62:

АРУТЮНЯН ГАЯНЕ ЮРЬЕВНА

Оценка и прогнозирование финансовой устойчивости страховой компании (по материалам РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03-“Финансы и бухгалтерский учет”
Защита состоится 28-ого декабря 2016г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете,
по адресу: 0025, Ереван, ул. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена оценке и прогнозированию финансовой устойчивости страховых компаний Республики Армения. Целью исследования является предложение научно обоснованной последовательности шагов (алгоритм) оценки финансовой устойчивости страховых компаний, а также нового метода прогнозирования, который основан на анализе международного опыта и который будет применен в современных условиях РА.

Научная новизна диссертации состоит в комплексном исследовании теоретических, методологических и практических аспектов оценки и прогнозирования финансовой устойчивости страховых компаний. Основу исследования составляют новые методы оценки и прогнозирования финансовой устойчивости страховых компаний. Одновременно диссертантом обосновано и предложено внедрение реплицирующего портфеля для расчета коэффициентов ликвидности, а также расчета минимального капитала, основанного на риске, и применение стресс тестирования для прогнозирования финансовой устойчивости страховых компаний.

Основная цель работы состоит в предложении научно обоснованного поэтапного оценивания финансовой устойчивости страховых компаний РА, а также в предложении нового метода прогнозирования, который основан на анализе международного наилучшего опыта и который будет применен в настоящих условиях Армении. Для осуществления этой цели выдвинуты следующие задачи:

- изучить теоретические, методические основы оценки и прогнозирования финансовой устойчивости страховых компаний, факторы влияющие на финансовую устойчивость, и ее особенности,
- изучить нормативные акты и требования предъявляемые к оценке и прогнозированию финансовой устойчивости, а также к платежеспособности и к

капиталу во всех тех странах, где действуют похожие требования, и выбрать наилучший из них,

- выявить особенности оценки финансовой устойчивости страховых компаний РА и выяснить возможности применения теории вероятностей во время оценки резервов страховых компаний и прогнозирования финансовой устойчивости,
- разработать предложения для оценки и прогнозирования финансовой устойчивости страховых компаний РА.

Основные результаты и научная новизна заключаются в следующем:

- Оценена связь между финансовым потенциалом, финансовым положением и прогнозированием финансовой устойчивости страховых компаний, с помощью алгоритма, а так же эффективность использования финансового потенциала страховых компаний, как предварительное условие для оценки финансового положения страховых компаний.
- Для обеспечения финансовой устойчивости страховых компаний, резерв незаработанных премий и резерв убытков классифицированы по классам страхования согласно нормальному, экспоненциальному закону распределения и закону распределения Парето, что послужило основой для формирования реплицирующего портфеля.
- Опираясь на результаты анализа данных и на формировании реплицирующего портфеля, определены новые интервалы коэффициентов абсолютной, быстрой и текущей ликвидности страховых компаний.
- Минимальный капитал страховых компаний пересчитан с использованием канадского подхода расчета минимального капитала, основанного на риске, с учетом страхового, кредитного, рыночного, оперативного рисков, а так же диверсификационного кредита. Кроме того, предлагается использовать новый показатель платежеспособности и подходы для его вычисления.
- Прогнозирование финансовой устойчивости страховых компаний осуществлялось путем стресс тестирования, основанного на предложенных стресс сценариях резерва незаработанных премий и резерва убытков. Предложен новый метод прогнозирования страховых брутто премий, который основан на определении темпов роста страховых премий в каждом квартале для каждого класса страхования, средних величинах и расчете коэффициента вариации и применения среднеквадратического отклонения.

Диссертация содержит выводы, полученные в ходе проведенных исследований, и предложения относительно решения ряда методологических проблем по оценке и прогнозированию финансовой устойчивости страховых компаний.

GAYANE YURI HARUTYUNYAN
THE ESTIMATION AND PREDICTION OF THE FINANCIAL STABILITY OF AN
INSURANCE COMPANY (BY THE MATERIALS OF RA)

**The thesis submitted for purposing the scientific degree of Doctor of Economics in
the speciality 08.00.03- "Finance and Accounting"**

**The defense of the thesis will take place on December 28, 2016, at 14⁰⁰ o'clock at
014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics.**

Address: 128, M. Nalbandyan str., Yerevan 0025

ABSTRACT

The thesis is devoted to the evaluation and prediction of the financial stability of insurance companies of the Republic of Armenia. The aim of the research is to provide a survey of the evidence-based sequence of steps (algorithm) for estimation of the financial stability of insurance companies, as well as a new prediction method, which is based on analysis of the best international experience which can be applied in the current conditions of Armenia.

The scientific novelty of the thesis lies in the comprehensive study of theoretical methodological and practical aspects of estimation and prediction of the financial stability of insurance companies. The basis of the research is the introduction of new methods for estimating and predicting the financial stability of insurance companies. Simultaneously dissertator justified and suggested the introduction of replicating portfolio for the liquidity ratios calculation, as well as risk-based minimum capital calculation and the implementation of stress testing for the insurance companies financial stability prediction.

The main objective of the work is to provide a science-based phase-estimation of financial stability of insurance companies of Armenia, as well as to offer a new prediction method, which is based on the analysis of international best practice which can be applicable in the present circumstances of Armenia. To achieve this goal, the following tasks are put forward:

- To study the theoretical and methodological framework of the assessment and prediction of the financial stability of insurance companies, the factors affecting financial stability, as well as its features,
- To examine the regulation acts and requirements which are applicable for the assesment and prediction of financial stability, as well as to the solvency and capital in all those countries which have the similar requirements and select the best one,
- To identify the features of an estimation of financial stability of insurance companies of Armenia and to find out the possibility of applying the probability theory in the evaluation of reserves of insurance companies and in the prediction of financial stability,

- To develop proposals for the assessment and prediction of the financial stability of insurance companies of Armenia.

Key findings and scientific novelties of the dissertation are as follows:

- A connection between financial potential, financial situation and prediction of the financial stability of insurance companies is assessed by an algorithm, as well as the efficiency of usage of the financial potential of insurance companies as a precondition for estimating the financial condition of insurance companies.
- To ensure the financial stability of insurance companies, the unearned premium reserve and the losses' reserve are classified according to classes of insurance in accordance with the normal, exponential and Pareto distribution laws that served as a base for the formation of a replication portfolio.
- New intervals are defined for absolute, quick and current liquidity ratios of insurance companies, which are based on the results of analyzes made on replicating portfolio formation.
- The minimum capital of insurance companies is recalculated by the Canadian risk-based minimum capital approach, taking into account the insurance, credit, market and operational risks as well as the diversification credit. Also it is proposed to use the new solvency ratio and approaches for its calculation.
- The financial stability of insurance companies is predicted by the way of stress testing, which is based on the suggested stress scenarios of unearned premiums and losses reserves. A new method for predicting insurance premiums written is suggested, which is based on the determination of the rate of growth of premiums in each quarter for each class of insurance, the average values, the calculation of the coefficient of variation and the use of standard deviation.

The thesis contains conclusions, obtained during the course of the research, and suggestions on a range of methodological problems in the evaluation and prediction of the financial stability of insurance companies.